

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԲԵԼՈՒԿԸ «ՀՈՐԻԶՈՆ» ՀԱՔԱԹԱԹԵՐԻԹԻ

ԱՊՐԻԼ 2017

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Աշխարհամարտը լաւագոյն առիթը համարուեցաւ թուրքերուն համար՝ ազատելու հայկական հարցէն եւ բնաջնջելու հայ ժողովուրդը: 1911-ին ներքին գործոց նախարար Թալիաթի նախագահութեամբ գումարուեցաւ գաղտնի ժողով մը՝ այս ծրագիրը գործադրելու համար, որուն մասնակցեցան Էնվեր, Ճեմալ, Նազըմ, Պէհաէտտին Շաքիր եւ ուրիշներ:

Ապրիլ 24-ի գիշերը թէ՛ մայրաքաղաքի եւ թէ՛ գաւառներու մէջ ձերբակալուեցան հայ մտաւորականները: Անոնցմէ ոմանք ենթարկուեցան անմարդկային չարչարանքներու, ոմանք կախուեցան, ոմանք ալ արքայութեան եւ սպաննուեցան անձանօթ վայրերու մէջ: Նահատակուած մտաւորականներուն թիւը հասաւ մինչեւ 600-ի:

Յունիսին սկսաւ բուն տեղահանութիւնը: Սկիզբը հաւաքուեցան 15-70 տարիքը ունեցող բոլոր այր մարդիկը: Ասոնց ըսուեցաւ, որ երկար ճամբորդութիւն պիտի ունենան, ապա՝ զանազան միջոցներով ջարդուեցան: Երկու շաբաթ ետք՝ կարգը հասաւ կիներուն եւ երեխաներուն, որոնց նոյն ձեւով ըսուեցաւ, թէ պատերազմի պատճառով կառավարութիւնը զիրենք պիտի փոխադրէ «ապահով վայրեր»:

Տեղահանութեան կարաւաններ կազմուեցան եւ զինուորներու ընկերակցութեամբ ճամբայ ելան դէպի Սուրիոյ անապատը, դէպի Ռազգա, Ռաս Ուլ Այն եւ Տէր Զօր:

Կարաւանները կ'երթային առանց փոխադրամիջոցներու, քալելով, կիզիչ արեւուն տակ, անօթի, ծարաւ, ամէն օր ենթարկուելով նոր յարձակումներու, կողոպուտի եւ առեւանգումի: Այդ ճամբուն վրայ նահատակուեցան տասնեակ հազարաւոր անմեղներ, իսկ հասնողները տեղւոյն վրայ սպաննուեցան:

1915-ի այս աննախընթաց Ցեղասպանութեան զոհ գացին մէկ ու կէս միլիոն հայեր, ինչպէս նաեւ մեր պատմական հայրենիքին մեծ մասը:



ԱՐՑԱԽԻ ՔԱՌՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄ

Արցախի քառօրեայ պատերազմին ռազմական գործողութիւններ տեղի ունեցան Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան բանակին եւ Ատրպէյճանի Հանրապետութեան զինուած ուժերուն միջեւ արցախա-ատրպէյճանական շփման գիծի ամբողջ երկայնքով, որ սկսաւ 2016 թուականի Ապրիլ 1-ի գիշերը: Բուռն մարտեր ընթացան ռազմաճակատի վերածուած առաջնային գիծի հարաւային (Հաղրութ) եւ հիւսիսարեւելեան (Մարտակերտ) ուղղութիւններով: Ապրիլ 3-ի գիշերը շփման գիծի ողջ երկայնքով ատրպէյճանական կողմը ակնանկետեղով շարունակած է արկակոծել Պաշտպանութեան Բանակի առաջնային դիրքերն ու մերձակայ հայկական բնակավայրերը:

Ապրիլի 5-ի գիշերը դարաբաղա-ատրպէյճանական հակամարտ գորքերուն միջեւ կրակի դադարեցման շուրջ պայմանաւորութիւն տեղի ունեցաւ: Հայերուն կողմը տուած է մօտաւորապէս 100 նահատակ զինուոր, մինչ ատրպէյճանական կողմը՝ աւելի քան 700 մեռեալ: Արցախեան այս քառօրեայ պատերազմը փաստեց, որ հայ ժողովուրդը ամէն գնով կը պաշտպանէ իր հայրենի հողը եւ տէր կը կանգնի պապենական իր բնօրրանին:



Ս. ԶԱՏԻԿ

Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը կը կոչուի նաեւ Զատիկ, որ կը նշանակէ զատում, բաժանում, հեռացում մեղքերէն եւ վերադարձ առ Աստուած: Զատիկը կը համարուի 5 տաղավար տօներէն մէկը: Զատիկի տօնին հաւատացեալները հաւկիթ կը ներկեն: Հաւկիթը կը համարուի յարութեան եւ նոր կեանքի սկզբնաւորման խորհրդանիշ, իսկ կարմիր գոյնը կը խորհրդանշէ խաչեալ Յիսուսի կենարար արիւնը, որ թափուեցաւ մարդկութեան փրկութեան համար: Քրիստոս յարեաւ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Վանգուվրի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի աշակերտները նամակ կը գրեն հայ զինուորին:

Ապրիլ ք, սիրելի՛ աշակերտներ, վարձքը կատար նաեւ ուսուցչուհիներուն.

Բարեւ զինուոր, իմ անունս Վանտա է, 11 տարեկան եմ, շնորհակալ եմ, որ կը պաշտպանես մեր երկիրը: Ես չեմ ճանչանար քեզ, բայց զիտեմ, որ դուն քաջ ես:

Վանտա Ստեփանեան

Սիրելի՛ զինուոր, իմ անունս Գարին է, ես հպարտ եմ, որ քեզի նման հայ զինուորներ ունինք: Ես ալ կ'ուզեմ քեզի նման պաշտպանել իմ երկիրս:

Գարին Պերշիկեան

Բարեւ քաջ զինուոր, իմ անունս Թամար է, ես ամէն շաբաթ օր հայկական դպրոց կ'երթամ: Ես կ'ուզեմ օր մը Հայաստան այցելել եւ շնորհակալ եմ քեզմէ, որ կը պահես երկիրս:

Թամար Քիչիւքկեօգեան

Սիրելի՛ զինուոր, իմ անունս Բամելա է, 10 տարեկան եմ եւ «Արագ» Շաբաթօրեայ վարժարանը կը յաճախեմ: Ես քեզի շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել, որովհետեւ դուն կը պատերազմիս, որ ինծի պէս մանուկներ հանգիստ կեանք ապրին:

Բամելա Պուճուք

Հայկական լաւաշ հաց

Լաւաշը հայկական աւանդական հաց է: Հայաստանի մէջ լաւաշ հացը յայտնի էր աւելի քան երեք հազար տարի առաջ: Կ'եփուի տաք հողի մէջ թաղուած յատուկ կաւէ գլանաձեւ փոսի մը մէջ, որ կը կոչուի թոնիր: Գետնափոր կաւէ թոնիրը հայկական խոհանոցի առաջին գործիքներէն է:

Լաւաշը աշխարհի ամենաերկար ժամանակի պահուող հաց է, զայն կարելի է պահել աւելի քան մէկ տարի, իսկ երբ թրջենք զայն ջուրով, դարձեալ կը կակուղնայ:

Հայերը լաւաշը հարս ու փեսային ուսին դնելով առատութիւն ու օրհնութիւն կը մատթելին: Լաւաշը հայուն փրկութիւնն էր ձմրան երկար ամիսներուն:

Լաւաշը կը նշանակուի Հայաստանի խորհրդանշներէն մէկը, անոր մասին գրուած են երգեր եւ բանաստեղծութիւններ:



Զանազան գիտելիքներ ջուրին մասին

- Ամենամաքուր ջուրը կը գտնուի Ֆինլանտայի մէջ:
- Տաք ջուրով աւելի արագ կրնանք սար ունենալ:
- Կովը 1 լիթր կաթ տալու համար պէտք է խմէ 5 լիթր ջուր:
- Գիտնականները հասեր են այն եզրակացութեան, որ ձայնը ջուրին մէջ աւելի արագ կը տարածուի, քան օդին մէջ:
- Մարդը առանց ջուրի կրնայ ապրիլ միայն 2-3 օր:
- Մեր ոսկորներուն 31%-ը կազմուած է ջուրով:
- Հասուն մարդու օրկանիզմի 60-70 %-ը կը կազմէ ջուրը:
- Մեր մոլորակի 80 %-ը ծածկուած է ջուրով, սակայն այդ ջուրին 1% միայն կրնանք օգտագործել խմելու համար:

Ճանչանք մեր հայրենիքը

Ջերմուկ

Ջերմուկը առողջարանային, զբօսաշրջային քաղաք է: Կը գտնուի Հայաստանի հարաւ-արեւելեան մասը մայրաքաղաքէն՝ 175 քմ. Հեռաւորութեան վրայ, ծովի մակերեսէն բարձրութիւնը 2070 մ. է ծածկուած է լեռներով ու մարգագետիններով, ամրան գով է եւ բազմագոյն, աշնան արեւոտ, իսկ ձմրան կը ծածկուի առատ ձիւնով, բայց նաեւ կապոյտ երկինքով ու պայծառ արեւով:

Միջնադարուն կառուցուած լողաւազանին մնացորդները ցոյց կու տան, որ Ջերմուկի բուժիչ հանքային ջուրերը, որպէս բուժամիջոց, օգտագործուած են դեռեւս դարեր առաջ:

Հրաշալի է Ջերմուկի մեծ ջրվեժը՝ 70 մ. բարձրութեամբ:

Ջերմուկը հարուստ է պատմամշակութային յուշարձաններով ու հիանալի վայրերով՝ Արփա-Սեւան փապուղի, Կեչուտի ջրամբար, Գնդեւանք, Վարդանի քար, Գլաձորի միջնադարեան համալսարան եւ այլն:

Ջերմուկը միշտ հանդիսացած է ձմեռնային հանգիստի եւ առողջապահական քաղաք: Նշանաւոր զբօսավայրերէն մէկն է Ջերմուկի ճոպանուղին, որուն երկարութիւնը 1000 մ. է: Ամենաբարձր կէտը 2480 մ. բարձրութեան վրայ է, ուր կը գտնուի նշանաւոր ճաշարանը:



**Թորոնթոյի «Գոլոլեան» նախակրթարանի Գ. կարգի
աշակերտները կը գրեն. կեցցե՛ն.**

Ապրիլ 24

Ապրիլ 24. ինչպե՞ս մոռնանք մէկուկէս միլիոն
նահատակները: Ցաւօք կորսնցուցինք անմեղ
կեանքեր, պատմական հողեր, պապենական
տուններ, սփռուեցանք հայերս աշխարհի մէջ, վիշտ
ու կարօտ մեր սրտերուն մէջ:

Վարդան Մանուկեան



Մենք Կա՛նք

1915-ին դաժան օրեր ապրեցանք,
Մեր հողերէն ու ջուրերէն բաժնուեցանք,
հեռացանք,
Անապատի տաք ճամբուն երկար օրեր քալեցինք,
Բայց դիմադրելու հոգին մեր մէջ չմարեցաւ:


Հակառակ թուրքի ջանքին, մենք գոյատեւեցինք,
Սփիւռքի մէջ ցրուելով նոր գաղութներ կազմեցինք,
Պահեցինք կրօնքն ու լեզուն ու յարատեւեցինք,
Ու մեր մայր հայրենիքի անկախութիւնը
պահեցինք:

Մենք՝ սփիւռքին մէջ մեծցած փոքրիկներս
հայազգի,
Փաստեցինք աշխարհին հայուն կամքը քաջարի,
Թէ որ նոյնիսկ դարեր անցնին այդ չար օրերէն,
Մենք կը մաա՛նք հայ ու կը խօսինք հայերէն:
Գայիանէ Յարութիւնեան



Ապրիլ 24

Ամէն տարի Ապրիլ ամսուն
Մենք կը յիշենք մեր զոհերը,
Որոնք 100 տարի առաջ
Մեծ ու փոքրիկ անմեղ մեռան:



Ունինք երկիր շատ սիրելի,
Հայաստան աշխարհի հիանալի,
Տէ՛ր Աստուած, պահէ խաղաղ
Հայրենիքը մեր յաւիտեա՛ւ
Եւա Մարդոյեան



Ապրիլ 24

Ապրիլ 24-ը շատ մեծ օր մըն է,
Այս օրը ամէն հայերը կը միանան
եկեղեցւոյ մէջ,
Մեզի համար շատ սուրբ օր մըն է,
Յիշելու մէկուկէս միլիոն
նահատակները:

Պիտի տխրինք, բայց պիտի չլանք,
Ու միշտ հայ պիտի մսանք,
Այս ուժով պէտք է զգանք,
Որպէսզի ամէնքս հայ մսանք
Եւ մեր հողերուն դարձեալ
տիրանանք:
Նորա Թարգի



Ապրիլ 24

Տարուան ամենատխուր օրն է մեզի համար, քանի
որ կը յիշենք մեր նահատակները անհամար, քանի
որ մեծ եղեռն էր՝ ցեղասպանութիւն ահաւոր: Ցաւ
կը զգանք, բայց վրէժը մեր սրտին, պիտի յիշենք
մեր զոհերը: Աղօթք՝ անոնց անթաղ մարմիններուն
եւ անէծք՝ մարդակեր թուրքերուն:

Անի Հրեշտակեան


Ապրիլ 24

Ապրիլ 24, դուն մեր սրտին մէջ
Մնա՞նաւ յիշեալ օր ես,
Վերապրումով մենք ահաւոր,
Կը յիշենք վերքը մեր սրտին:
Էլենա Գրիգորեան



Ապրիլ 24

Ապրիլ 24-ը իմ ազգիս եւ ինծի համար շատ տխուր
օր մըն է: Մեր 1.5 միլիոն նահատակներուն համար
շատ տխուր կը զգամ: Թէեւ մտածածս շիտակ չէ,
բայց կ'ուզեմ, որ մենք ալ թուրքերը սպաննենք,
որպէսզի գիտնան, թէ հայերուն ի՛նչ ըրին, մինչեւ
որ անոնք ճանչնան իրենց ըրած
ցեղասպանութիւնը եւ վերադարձնեն մեր հողերը,
այն ատեն ես ուրախ պիտի ըլլամ:
Քամի Հաճիարթիւնեան



Ապրիլ 24

Ապրիլ 24-ը կու գայ,
Սիրտս միշտ արիւն կու լայ,
Հայ եմ ես, քաջ եմ ես,
Հայաստանը պաշտպանող անվախ սերունդ եմ ես:
Օլիվիա Օյմաքաս

Ապրիլ 24

Նորէն Ապրիլ ամիս է, եւ ես կը մտածեմ իմ հայ ազգի պատմութեան
մասին: Թէեւ պատմութիւնը տխուր է, բայց ես որպէս հայու զաւակ,
պիտի սորվիմ հայ լեզուն, որ ժառանգած եմ մեր պապերէն. նաեւ
կ'ուզեմ ընկերներս միշտ իրարու հետ հայերէն խօսին, որ երբե՛ք
չմոռնանք մեր մայրենի հարուստ լեզուն: Եւ այսպիսով թ ող որ
թուրքը լաւ իմանայ, որ ինքը չէ յաջողած եւ չի յաջողիր իր
նպատակին հասնիլ:

Լարա Տէր Մինասեան



Ապրիլ 24

Հազար ինը հարիւր տասնհինգին,
Չար կատաղի պատերազմ էր,
Միլիոնաւոր հայեր մեռան,
Մեծ մաս մըն ալ տեղահան եղան:


Սակայն հայը տակաւին կայ,
Ու իր լեզուն կը մսայ,
Կը պայքարի, կը պահանջէ,
Որոշած է չնահանջել:
Տանիէլա Բէֆանիս



Ապրիլ 24

Ես հայ եմ,
Բոլոր հայերու նման,
Ես թոռնիկն եմ
Նահատակուած մեծ հօրս:

Բնաւ չեմ մոռնար
Հայոց ջարդը
Ու կը խոստանամ
Պաշտպանել Հայ Դատը:
Յ. Կիւրիւնեան



Ո՞վ կ'ուզե բազմագետ ըլլալ:

1.- Որպես ի՞նչ կ'օգտագործուի Ջերմուկ քաղաքի ջուրը:

- Ա. Սննդամիջոց
- Բ. Առևտուրի միջոց
- Գ. Բուժամիջոց
- Դ. Ժառանգության միջոց



2.- Ո՞ր կ'եփուի լաւաշ հացը:

- Ա. Յատուկ տաք կաւէ տունի մը մէջ
- Բ. Յատուկ տաք կաւէ պնակի մը մէջ
- Գ. Վառարանին մէջ
- Դ. Թոնիքին մէջ

3.- Հայոց ցեղասպանութեան քանի՞ երոթ տարեկիցը կը նշուի այս տարի:

- Ա. 107
- Բ. 102
- Գ. 105
- Դ. 101



4.- Ի՞նչ կը խորհրդանշէ կարմիր հաւկիթը:

- Ա. Աստուծոյ որդիին զգեստները
- Բ. Աստուծոյ որդիին սիրտը
- Գ. Աստուծոյ որդիին թափած արիւնը
- Դ. Աստուծոյ որդիին մահը

5.- Ինչո՞ւ Ծաղկազարդին եկեղեցին ձիթենիի ճիւղերը կ'օրհնէ:

- Ա. Ի յիշատակ Քրիստոսի մահուան
- Բ. Ի յիշատակ Քրիստոսի Երուսաղէմ մուտքին
- Գ. Ի յիշատակ Քրիստոսի չարչարանքին
- Դ. Ի յիշատակ Քրիստոսի ծննդեան



6.- Ե՞րբ տեղի ունեցաւ Արցախի քառօրեայ պատերազմը:

- Ա. 2016 Ապրիլ 1-ին
- Բ. 2017 Ապրիլ 1-ին
- Գ. 2015 Ապրիլ 1-ին
- Դ. 2014 Ապրիլ 1-ին

7.- Քառօրեայ պատերազմը տեղի ունեցաւ առաւելապէս՝

- Ա. Երեւանի մէջ:
- Բ. Շուշիի սահմանին:
- Գ. Հաղարծի եւ Մարտակերտի սահմաններուն:
- Դ. Ստեփանակերտի մէջ:

8.- Հայոց Ցեղասպանութեան ժամանակ մեր ժողովուրդը քշուեցաւ դէպի՝

- Ա. Եգիպտոսի անապատները:
- Բ. Լիբանանի անապատները:
- Գ. Պաղեստինի անապատները:
- Դ. Սուրիոյ անապատները:

9.- Ջերմուկի ճոպանուղիին երկարութիւնը՝

- Ա. 2000 մետր է:
- Բ. 1000 մետր է:
- Գ. 1500 մետր է:
- Դ. 2500 մետր է:

10.- Լաւաշ հացը՝

- Ա. Արաբական աւանդութենէն հասած է մեզի:
- Բ. Հայկական աւանդական հացն է:
- Գ. Միջին Արեւելքին յատուկ է:
- Դ. Գանատական հաց է:

Մարտ ամսուան Բազմագէտին մասնակցող աշակերտներուն ցանկերը.

Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Մարաֆեան»

նախակրթարան Մասնակիցներուն անունները

Վանա Գրիգորեան
Գէորգ Սարգիսեան
Գէորգ Պատաքեան
Հրակ Գահուէճեան
Կարօ Սարգիսեան
Սեւակ Գոյումճեան
Մարեթա Սարգիսեան
Վարդան Կարապետեան
Արուին Արըճեան
Նժդէհ Գոյումճեան
Միհրան Հ.

Մէլրի Գրիգորեան
Ակաբէ Նազարեան
Արենի Գրիգորեան
Անտրու Տանհօ
Միա Գ.

Անի Ա.

Ալինա

Սազօ Զուքաքէլեան
Նարէկ Թահանեան
Լիսա Գազանճեան

Ճիշդ

պատասխանողներուն անունները

Լիլիթ Ադամեան

Սիլվի Օզճեան

Եսենիա Քելլէեան

Էտի Զապունեան

Լիա Մազլումեան

Յարութ Զուլճեան

Վանա Թաթոյեան

Աննա Քրիսթի Գայապալեան

Առլի Քելլէեան

Վարդան Նազարեան

Անդրանիկ Քիրթիքեան

Արագ Զարեան

Գրիգոր Պեքարեան

Սիլվա Ադամեան

Զաւէն Զուլճեան

Մերլի Օզճեան

Միրէյ Գափլանեան

Սիլվի Միքայէլեան

Սինթիա Թոփալեան

Ժանէթ Փալանճեան

Քրիստափոր Զարեան

Թորոնթոյի ՀՕՄ-ի

«Գոլուլեան» նախակրթարան

Մասնակիցներուն անունները

Լիանա Աւանուս

Ռուբէն Նաւասարդաեան

Անի Հրէշտակեան

Մաթէօ Վիլօ

Վան Տէր Յարութիւնեան

Լարա Տէր Մինասեան

Արինէ Ճամկէօզլու

Արի Մուրատեան

Օլիվիա Օյմաքաս

Մարիլին Էմմանեան

Աննա Մարի Տէմիրճեան

Քամի Հաճի Արթինեան

Անահիտ Կարապետեան

Քարինա Գանտահարեան

Հէլլի Էվընզ

Գառնի Շիշոյեան

Նորա Թարգի

Գայիանէ Յարութիւնեան

Եւա Մարտոյեան

Մաքս Մաճարեան

Մարք Աբէլեան

Էվելինա Յակոբեան

Թէօ Նազարեան

Մարիամ Պոյաճեան

Էմին Պետրոսեան

Մեղրի Զարշաֆեան

Լուսին Ծաղիկեան

Մարիամ Պետրոսեան

Նուշիկ Թոզճեան

Յակոբ Կիրիւնեան

Միլա Սերայտարեան

Եւա Շահվերդեան

Էլենա Գրիգորեան

Ճուլիէն Փիլաւճեան

Տանիէլա Բէֆանիս

Սոֆիա Աւագեան

Յակոբ Հարմանտեան

Լենա Մահտէսեան

Ալէքսիա Թէլեան

Արքայ Կիրակոսեան

Թորոնթոյի Ս.

Գրիգոր Կաթողիկէ

Շաբաթօրեայ

վարժարան

Ճիշդ

պատասխանողներու

ցանկ

Գառնի Մարգարեան

Դուին Պօւմոդաքեան

Քրիսթա

Շահմուրատեան

Հերոս Շիմփիլեան

Քարինա

Շահմուրատեան

Աղէքսանտրա Սիմաօ

Պօղոս Թովմասեան

Առլի Սքաֆ

Կրէյս Ապաճեան

Դալար Բրուտեան

Թալին Շահինեան

Գէորգ Պօզեազալեան

Երան Զոքաքլեան

Տալիթա Հապէթեան

Արեք Տոնոյեան

Վանգուվըրի ՀՕՄ-ի «Արագ»
Շաբաթօրեայ վարժարան
Ճիշդ պատասխանողներու
ցանկ

Բամելա Պուճուք

Մէլին Ղալի

Քրիստ Սեդրակեան

Գարին Պերշիկեան



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Խմբագրութիւն՝ Սոնա Թիթիգեանի
Թիւր պատրաստեց Յուշիկ Բաբունճեան
Ձեւադրացը՝ Նորայր Նիկողոսեանի

Հեռաձայն (514) 332-3757
Հեռապատճեն (514) 332-4870
Email: sylvia@horizonweekly.ca